Ժ Թ.

Քո սէրն իմ սըրտիս միջին տուն շիներ ’ւ ի մէջ կու կենայ.
Աչերն այլ երդինք դըրեր, մութ ընքուին ի վեր կու կեայ.
Աչերն այլ երդինք դըրեր, մուխն երդինքն ի վեր կու ելնայ.
Եկէք հանց տընակ տեսէք, մուխն ելեր երդիք չիկենայ:

ՔՍԱՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ
ՀԱՅՐԵՆԻՔ ՍԻՐՈՅ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ա.

Առանց խոց, առանց եարայ՝ զիս տեղտկս հիւանդ է ձըգեր.
Հարցունք մէկ ընդ իս եղէք, որ ասեմ՝ Սեւ աչքն է արեր.
Էնօք սեւ աչքն է արեր՝ իւր ծոցուն մահրում է հաներ:
Այլում այլերում կ՛ասեմ չեմ եկեր՝ քո սէրդ է բերեր:

Բ.

Հատիկ մի մէրճան լինի՛ի՝ ես ի քո վըզնոցն ելնէի.
Կամ սիրուն ակունք լինի՛ի՝ քո լօհիդ մէջընն լոյս տայի.
Կամ պաղ աղբիւր ջուր լինի՛ի քո հէրանց ի պաղչան մտնի՛ի,
Ձկուժն առնի՛իր ի ջուրն գայիր, քո կ՛ժիդ մէջընն լըցուէի,
Վեր կալնի՛իր ու թեւիդ դնի՛իր, ես ի քո ծոցըդ թափէի,
Գլոր՛ի ի մէջ ծիծերուդ, քո ճեմակ ծոցըդ թանայի:

Գ.

Ո՞վ էր վարեր զիւր եարընն, զինչ որ ես հանի վարեցի,
Տարայ յանահուն սարերն անցուցի ու նըստայ լացի.
Ով եկաւ նա հարցուցի, ով գնաց նա թուղթ գըրեցի.
«Գնացէ՛ք իմ եարոջն ասէք թէ՝ Քո եարն անկեր կու մեռնի:
Բարձըր սարերուդ ի ափն շարած են ակնատ մի քանի.
Չիգաս դու ի ներս ընկնիս, մընայ եարդ ողորմի ու լալի:»:

Դ.

Մանկան մահանայ բերի թ՛ի՞նչ առնէ մանուկս ատենի.
Անցգուն ատենի առայ որ փողոցն ի ջուր կու տանի.
Վախեմ թէ չարկամ լինի. գայ զիս այս հալըս տեսանի.
Մեռնիլն ինծի շատ լաւ էր քանց ի այս հալըս կենայի: